

I. ՈԼՈՐՏԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ), համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով սահմանված պահանջների, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 2010 թվականի աշխատանքային գործունեությունը ծավալել է ըստ «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» (հետայսու՝ Ծրագիր), (տես՝ ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր 2 (354)¹, 27 հունվարի 2010թ.):

Հայաստանի Հանրապետության տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրն է: Պետական վիճակագրական գործունեության ուղղությունները սահմանելու համար մշակվում է **Շտամյա ծրագիր**, իսկ այդ ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների որոշման համար՝ **Տարեկան ծրագիր**:

Ծրագիրը սահմանում է ՀՀ ԱՎԾ, ինչպես նաև մյուս պետական մարմինների և այլ կազմակերպությունների՝ ՀՀ ԱՎԾ կողմից ընդհանուր համակարգման միջոցով իրականացվող պետական վիճակագրական հաշվառման մեջ ընդգրկված ցուցանիշների (և դրանց հաշվարկման, մշակման, ամփոփման, հրապարակման աշխատանքների) ցանկը, ինչպես նաև դրանց ամբողջականացման և հաշվառման կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները կառուցվում են այնպես, որպեսզի ապահովվի երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովվեն դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Ծրագիրը մշակվում է վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա, քանի որ երկրի ազատական տնտեսակարգին անցման պայմաններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական վերափոխումները, տնտեսությունում տեղի ունեցող արագ տեղաշարժերը սկզբունքային անհրաժեշտություն են առաջացրել վիճակագրական տեղեկատվություն սպառողներին (օգտագործողներին) ապահովելու առավել ամբողջական, արժանահավատ և ժամանակի չափանիշներին համապատասխանող վիճակագրական հրապարակումներով:

Հայաստանի պաշտոնական վիճակագրության բոլոր գործառույթների ծրագրավորումը խարսխվում է պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների (ընդունված Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ Նյու-Յորք, 14.04.94թ) և դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշներով ու ստանդարտներով:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից մեկը սպառողներին (օգտագործողներին) շուկայի պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանք տրամադրելն է:

Արդի փուլում վիճակագրության առանձնահատկությունը բնութագրվում է այլ ոլորտների նկատմամբ տեղեկատվության ոլորտի առաջանցիկ զարգացման պահանջով, հետևաբար և՛ տեղեկատվական գործունեության և համակարգերի առաջանցիկ արժեքավորմամբ (թանկացմամբ): Վիճակագրության առանձնահատկությունը բնութագրվում է նաև հասարակության լայն զանգվածների և հանրային կյանքի մնացյալ բոլոր սուբյեկտների հետ առնչվող տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, երկրի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական ցուցանիշները բովանդակող տեղեկատվության նկատմամբ պահանջարկի մշտական աճով:

Պետական վիճակագրությունը համակարգվում և հիմնականում իրականացվում է ՀՀ ԱՎԾ կողմից: Այն իրավական տեսանկյունով միասնական համակարգ է, կազմակերպական տեսանկյունով՝ երկաստիճան, իսկ վարչատարածքային բաժանման (կամ տեղեկատվության հավաքագրման) տեսանկյունով՝ եռաստիճան (ներառյալ՝ առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող 11 մարզային գործակալություններն իրենց տարածքային միավորներով):

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ամսական զեկույցներում, այլ վիճակագրական և տեղեկատվական հրապարակումներում չեն արտացոլվել սկզբնական վիճակագրական տեղեկություններ կայացնողների անվանական տեղեկությունները, բացառությամբ սկզբնական վիճակագրական տեղեկություններ կայացնողների կողմից մինչ վիճակագրության պետական լիազոր մարմնին վիճակագրական բնույթի տեղեկություններ կայացնելն ինքնուրույնաբար կամ այլ կերպ հրապարակվածների և (կամ) դրանց հետ համաձայնեցվածների: